

# ԱՐԺԱՆԱԻՈՐ ՄԵԾԱՐԱՆՔ՝ ԱՐԺԱՆԱԻՈՐԻՆ

Լիբանանահայ թատերապետ հասարակության համար ծանօթ աճուն է բեմադրիչ Երուանդ Ղազանճեանի աճունը անկասկած, որուն բեմադրությունները վերջերս Յակոբ Տեր Մելքոնեան թատերապարհին մէջ կը ներկայացնուի Արթուր Միլլերի «Սալէմի Վուկաները», յաղթական ու յաջող ելոյթներով:

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Հայ Երիտասարդաց Ընկերակցության «Վահրամ Փափազեան» թատերախումբը, ուրախութեամբ է որ դարձնալ բարձրացած է թատերապետ, խանդավառելու համար մեր փորձիկ աճուն: Իրերայաջորդ ութը տարիներէ ի վեր, հայրենի հմուտ վարպետ Երուանդ Ղազանճեան կը բեմադրէ «Վ. Փափազեան» թատերախումբը մեծ սիրով, զայն սիրողական մակարդակէն բարձրացնելով արհեստավարժ մակարդակի, այսինքն՝ սիրողականէն... տիրողականի...:

Անշուշտ, այս բոլորը, շնորհիւ այն եզակի ուժին, որ իր ամբողջական ջանքով ու կամքով կանգուն ու յաղթական կը պահէ նուիրեալ արուեստագետներու ամբողջ խումբ մը: Պատիւ մեծ ու փորձառու բեմադրիչ Ղազանճեանին ու պատիւ՝ անձնաձեռք գինորներուն, այս վերելքին համար:

Ղազանճեան արուեստագետ-բեմադրիչ արուեստը գնահատող Հ.Բ.Ը.Մ.-Ն.Ե.Ը.-ի Կեդրոնական Վարչութիւնը, արդարեւ արժեւորելու համար մեծ վարպետին ճիգն ու ջանքը, փափաքեցան մեծարել զինք մտերմիկ շունչով, Երկուշաբթի, 17 Մարտ 2008-ին, երեկոյեան ժամը 8:00-ին, Հ.Բ.Ը.Մ.-ի Ե. ու Ս. Տեմիրճեան Կեդրոնէն մերս, արուեստաւէր հոծ հասարակութեան մը ներկայութեան, անոր եօթանասուն ամենակին աղօթով:

Հանդիսութեան ներկայ էին Լիբանանի հայոց թեմի առաջնորդ Գեորգ Տ. Գեղամ Եպս. Խաչերեան, Հայաստանի Հանրապետութեան դեսպան տիար Վահան Տեր Դեռնդեան, Հ.Բ.Ը.Մ.-ի ղեկավարներ, Հ.Ե.Ը.-ի Կեդրոնական Վարչութեան ատենակազմն ու վարչականներ, քոյր միութիւններու պատասխանատուներ, հայկական վարժարաններու տնօրէններ, խմբագիրներ, միութենականներ եւ արուեստը գնահատող բազմաստիճանակ հայրորդիք:

Երեկոյեան սկսաւ Հ.Ե. Ընկերակցության վարիչ տնօրէն պր. Գեորգ Սանթրոյեանի բացման խօսքով, որ ան բարի գաղափարի ջրմ խօսքեր ուղղեց ներկայներուն եւ փոխանցեց Կեդրոնական Վարչութեան ուղեցուցիչ խօսքը:

Հուսկ ապա, Հ.Բ.Ը.Մ.-ի «Մայիտակ» խումբի արուեստագետներ՝ Ծամէ Պապահէբեանն ու Ռաֆֆի Տեր Առաքելեան ձեռնարկեցին օրիկի վրայ հրամայեցին հայկական քաղցր մեղեդիներ՝ անթերի կատարողութեամբ:

Երաժշտական ունկնդրութեան յաջորդեց «Մայիտակ»-ի մեներգչուհիներէն Աննա Պաթուգեանի «Աշտարակ» եւ «Մայրոջ» երգերը, որ ձգեց հաճելի տպաւորութիւն ներկայ հասարակութեան վրայ, գեղարուեստական բարձր ճաշակով:

Երաժշտական շատ հաճելի ու ակամբ շրջող մեղեդիներէն էտք, հրախորհեցաւ լիբանանահայ ծանօթ մտաւորական, մատենագէտ, Հ.Բ.Ը.Մ.-ի Դարմաթի-Յովակիմեան վարժարանի տնօրէն տիար Ժիրայր Դանիէլեանը, որպէսզի արտայայտուի բեմադրիչ Երուանդ Ղազանճեանի մասին:

Յարգելի բանախօսք, ամփոփ, բայց կոտ խօսքերով ամբողջական գնահատական տուաւ Ղազանճեան բեմադրիչին կենսագրութեան, անցած ուղիին, անոր վաստակաշատ ծառայութեան, արուեստի բնագաւառներէն մերս իր բերած շնորհաբեր նպաստին եւ անգրովական ու կատարելապէս մարտի մակարդակի բնախօսքի արուեստին մասին, ամենայն բնախօսքութեամբ:

Ժիրայր Դանիէլեան կարեւորեց Հայաստան-Սփիւռք փոխ յարաբերութեան մէջ վարպետին բերած օժանդակութիւնը եւ ծանրացաւ Երուանդ Ղազանճեանի հայրենի թատերական կենսոյ ոլորտներուն մէջ ունեցած բացառիկ կարեւորութեան եւ մինչեւ օրս անոր բեմադրած բազմապիսի ներկայացումներուն եւ անոնց յաջող կատարելապէս արդիւններուն մասին:

Բանախօս, պր. Դանիէլեան, յայտնելով իր հիացումը, ըրաւ բեմադրութիւններէն եւ ըսաւ, թէ մեզ միշտ ալ պատառակաւ դերի մէջ ենք... ակնկալելով նոյն՝ նոյն հրաշագործութիւններ՝ ամբողջական ու կատարելապէս մարտի Ղազանճեանէն:

Բանախօսական յաջող, ամբողջական ու կատարելապէս գոհացուցիչ ելոյթ էտք, իր արտիկ խօսքը ըրաւ Հայաստանի Հանրապետութեան Լիբանանի մօտ դեսպան՝ պր. Վահան Տեր Դեռնդեանը:

Ան, մեծապէս դրուատեց հայրենի արուեստագետին տաղանդը, անոր եզակի ու բացառիկ ներկայութիւնը Հայաստանի արուեստի շրջանակներէն մերս, անցնելով, թէ «Վ. Փափազեան» թատերախումբը բախտաւոր է որ ունի Երուանդ Ղազանճեանի նման բեմադրիչ:

Պարոն Տեր Դեռնդեանի արտածած խօսքին յաջորդեց Հ.Ե. Ընկերակցության Կեդրոնական Վարչութեան գնահատանքի խօսքը, զոր ըրաւ ատենակազմ տիար Կարօ Ընդրեանը, որ իր կարգին ներքոյեց արժանատի բեմադրիչին վաստակը, անոր ծառայութիւնը հայ բեմին եւ հայ արուեստին:

Պր. Կ. Ընդրեան, արտայայտելով անոր արուեստի ուղիին, ըսաւ. - Մեր պատգամը յարգանքի երեկոն, համեստ տուրք մըն է: Տակաւին վերջերս, Հայաստանի մէջ մեծ տարողութեամբ ճշտեցաւ վարպետին եւ իր ազգի տիկնոջ յոբելանները. սակայն մեզ, մեր կարգին չէինք կրնար անտարբեր մնալ եւ լռու անցնիլ տաղանդաւոր վարպետին 70-ամեակին կապակցութեամբ, որ կը կամրջէ Հայաստանն ու Սփիւռքը, բնախօսքորէն, հայօրէն:

Անկակապ, առանել ուրախութեամբ աղօթող երեւոյթ հանդիսացաւ Ն.Ս.Ս.Տ. Արամ Ս. Գաբրիէլի «Օրհնութեան Գիրք», որ այս օր, մասնատարապէս շնորհած էր մեծ բեմադրիչին, որը կը գնահատուէր անոր տարիներու տրճաբան աշխատանքը, բեղմնաւոր ուղին եւ բերած աւանդը՝ հայ արուեստին՝ աներկբայօրէն:

Թեմիս առաջնորդ, Գեորգ Տ. Գեղամ Եպս. Խաչերեան, անձամբ ընթերցեց եւ յանձնեց «Օրհնութեան Գիրք», որոտընդուտ ծափերու մէջ:

Սրբազան հայրը կարեւորելով ձեռնարկին տարողութիւնը, ակեցուց, թէ այսօր մէկ մեծարանքի տուրք չէ որ կու տանք, այլ՝ երկու: Եթէ առաջինը բեմադրիչ Երուանդ Ղազանճեանի հանդէպ մատուցող յարգանքն է, ապա երկրորդը՝ լիբանանահայութեան, որ գիտէ մնալ կանգուն, մնալ պատուէշի վրայ, գոյատեւել եւ արտադրել, որուն կենդանի վկայն է Հ.Ե.Ը.-ի «Վահրամ Փափազեան» թատերախումբը:

Հանդիսութեան վերջաւորութեան շնորհակալական խօսքով հանդէս եկաւ մեծարեալը, որ յուզումնախառն արտայայտութեամբ յայտնեց իր գոհունակութիւնը եւ երախտը ու խոստացաւ որ ինք պիտի ծառայէ հայ բեմին, հոս կամ այլուր, միշտ մնալով հաւատարիմ՝ իր սկզբունքին... որովհետեւ, թատրոնը իր «Աշխարհ»-ն է:

Հանդիսութեան ասարտին, «Վահրամ Փափազեան» թատերախումբի երիտասարդ պարմանուհիներ ծաղկեփունջեր նուիրեցին մեծ վարպետին:

Հայաբոյր արուեստի երեկոն շարունակուեցաւ հիւրապիրութեամբ:

ՀԱՄԲԻԿ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

## Միջին Արեւելք

# ԻՐԱԲԻ ՔԻԻՐՏԻՍՏԱՆԸ (ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻԻՆ ՆԵՐ)

Անցեալ Փետրուարին հիսիսային Իրաքի մէջ Քիւրտիստանի Աշխատատրական կուսակցութեան դիրքերուն դէմ թրջական բանակին կողմէ կատարուած գինորական գործողութիւններէն էտք, անգամ մը ես լուսարձակի տակ առնուեցան Իրաքի Քիւրտիստանի իրականակը եւ առ հասարակ քրտական հարցը:

Ստորեւ կը ներկայացնենք Իրաքի Քիւրտիստանի մասին վիճակագրական կարգ մը տեղեկութիւններ, մասնաւոր Մոցի երրորդ պատերազմէն (1991) էտք տուեալներու լոյսին տակ:

### ԻՐԱԲԻ ՔԻԻՐՏԻՍՏԱՆԸ

- Իրաքեան նահանգ մը, որ ինքնավարութիւն կը վայելէ 1991 թուականէն ի վեր, Մոցի պատերազմէն էտք շրջանը ամերիկեան հովանաւորութեան տակ առնուելու թուականը:
- Ունի երեք ենթանահանգներ՝ Տհուր, Արպիլ եւ Սուլեյմանիէ:
- Բնակչութեան թիւը կը տարբերի չորս-

- աւն հինգ միլիոնի միջեւ:
- Մոցի պատերազմին Իրաքի պարտութենէն էտք քիւրտերը ըմբոստութեան դիմեցին: Պաղտատ, երկրի օրումն նախագահ Սատուա Հիւսէյնի օրով, շտապեց ճզմել անոնց ըմբոստութիւնը, ինչ որ պատճառ դարձաւ քիւրտերու գաղթին դէպի Իրան եւ Թուրքիա:
- 1992 թուականին հիմնուեցաւ Քիւրտիստանի յաստի խորհրդարանը, գոր կիսուեցան շրջանին մէջ գտնուող քրտական երկու կուսակցութիւնները՝ Տեմքթրական կուսակցութիւնն ու Ազգային միութիւնը:
- Երկու կուսակցութիւններուն միջեւ 1994-ին ծագեցաւ զինեալ հակամարտութիւն մը, որուն զոհ գացին երեք հազար անձեր:
- Իրանեան, իրաքեան եւ թրջական ուժերը թափանցումի գործողութիւններ կատարեցին, իրաքեանչիւր օրով քրտական խըմբաւորումի մը աջակցութեամբ:
- 1998 թուականին երկու կուսակցութիւնները ստորագրեցին «խաղաղութեան համաձայնութիւն» մը, ապա կըքննուէր 2002 թուականին համաձայնութիւնը, որ վերակենդա-

- նացուց խորհրդարանը:
- 2003 թուականին, քիւրտերը ամերիկեան ուժերուն հետ դաշնակցեցան, Իրաքի նախագահ Սատուա Հիւսէյնը տապալելու անոնց պատերազմին մէջ, ինչ որ քիւրտերուն հնարաւորութիւն տուաւ քարկղով հարուստ հերքութիւ շրջանը մտնելու:
- Յունիս 2005-ին, իրաքեան խորհրդարանը Մատու Պարագանին Քիւրտիստանի նախագահ ընտրեց:
- Յունուար 2006-ին, Իրաքի նախագահ Մալապալի (քիւրտ) եւ Պարագանի միացեալ վարչակազմին հաստատուելու համաձայնութիւն մը ստորագրեցին:
- 2006 թուականի Մայիսին, այդ նահանգին համար տեղական կառավարութիւն մը կազմուեցաւ:
- Հիւսիսային Իրաքի շրջանին մէջ, Քիւրտիստանի Աշխատատրական կուսակցութեան դիրքերուն եւ ամբողջներուն վրայ թրջական բանակին յարձակումները կը շարունակուին 2007 թուականի Դեկտեմբեր մինչեւ ի վեր:

# ԵՐՈՒՄԱՂԷՄԻ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ 70-ԱՄԵԱԿԸ

Երուանդէմի Հայ Երիտասարդաց Միութիւնը փառաշուք ձեւով տօնախմբեց իր հիմնադրութեան 70-ամակը: Հայ Երիտասարդաց Միութիւնը (Հ.Ե.Մ.) հիմնուած է 1937-ին, շնորհիւ քանի մը նուիրեալ անձերու եւ քաջալերանքով Երջանկաշիջատակ Տեր Թորգոմ Պատրիարք Գուշակեանի, որ պատրիարքութեան հովանաւորութիւնը շնորհելով միութեան, անոր տրամադրած է նաեւ Սթրոք Յակոբեանց Վանքէն մերս սրահ մը, որ մինչեւ օրս կ'օգտագործուի իբրեւ մշակութային ու մարզական կեդրոն:

Հ.Ե.Մ.-ը նախ ոգնուարին օրեր անցուցած է 1948-ի արաբ-հրեական պատերազմին, ինչպէս նաեւ 1967-ի արաբ-իսրայէլեան վեցօրեայ պատերազմին, որմէ էտք կը գոյատեւէ իսրայէլեան գրաման տակ: Սաղիմահայութիւնը, չիմնապով գրաման ու անոր դաժման պայմաններուն, մեծամասնութեամբ կը գաղթէ դէպի օտար ափեր, որուն հետեւանքով ալ կորսնցուց իր լաւագոյն անդամներուն մեծ մասը:

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին, Հայ Տունը, ազգային դպրոցը եւ Հ.Ե.Մ.-ը ազգապահպանման կարեւոր ազդակներ են սաղիմահայ գաղութին համար: Հ.Ե.Մ.-ը մշակութային գետնի վրայ հասած է բարձրունքներու եւ արձանագրած մեծ յաջողութիւններ, կազմակերպելով գրական երեկոններ, նուիրում մը պատմութեան

ու գրականութեան ակամատր դէմքերու: Նաեւ կազմակերպած է հայկական երաժշտական երեկոններ, հանդէսներ, համախօսութիւններ:

1944-ին պաղեստինահայութիւնը եւ ի մասնաւորի Հ.Ե.Մ.-ի երիտասարդութիւնը հաճուքն ու բախտը ունեցան ներկայութիւնը վայելելու մեր ազգին բացառիկ արժեքներէն հրապարակագիր, ազգային գործիչ եւ անգուրկական քերթող, բանաստեղծութեան իշխան Վահան Թէքէտեանը:

Հ.Ե.Մ. մարզական հակա գործունէութիւն տարած է իր հիմնադրութենէն ի վեր: Անոր պատերազմի խումբերը տիրացած են բաժակներու եւ նոյնիսկ երկրի ախոյեանութեան հասած են: Հ.Ե.Մ. ունի պարբերաբար մը, որ լոյս կը տեսնէ միութեան հիմնադրութենէն ի վեր եւ կապն է սփիւռքի տարածքին գտնուող նախկին բոլոր երուանդէմիներուն հետ:

Առաջին օրէն Հ.Ե.Մ. թիկունք կանգնած է պատրիարքութեան, երած է հաստատար անգամ Հայ Առաքելական Եկեղեցոյ եւ պաշտպանած է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գերագահութիւնը: Վերջապէս, Հ.Ե.Մ.-ը ազգային դաստիարակչական եւ հոգեկան մաքոր ու սքանչելի դպրոց մըն է, եւ բարեմաստակ ու անշահախնդիր կերպով կը ծառայէ ազգին, հայրենիքին եւ սաղիմահայ հասարակութեան:

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՈՐԵՐ

Յուրքի մը վճռաբեկ դատարանը իշխող «Արդարութիւն եւ Բարգաւաճում» կուսակցութեան գործունէութիւնները արգելելու պահանջով դիմեց Սահմանադրական Դատարան:

Իշխող կուսակցութիւնը կ'ամբաստանելի հակա-աշխարհիկ գործունէութեամբ: Դատարանը նաեւ պահանջեց քաղաքական գործունէութեան իրաւունքէն զրկել 71 գործիչներ, որոնց մէջ, նախագահ՝ Ապտուլլա Կիւլը, վարչապետ՝ Ռեճեպ Թայի Երտողանը եւ խորհրդարանի նախագահ Պիլեմը Արընքը:

Ըստ դատարանին, նախագահ Կիւլ՝ տակաւին արտաքին գործը նախարարի պաշտօնը վարելու շրջանին աշխարհիկ կուսակցութեան սկզբունքներուն հակասող հրահանգներ տուած է թրջական դիւանագիտութեան մէջ ծանայողներուն, իսկ վարչապետ Երտողան ըսած է, թէ լաչակի հարցով դատարանները վճիռ կայացը-ւելու իրաւունք չունին:

Վարչապետ Երտողան ըսաւ, որ Սահմանադրական Դատարանին կողմէ նման որոշում մը պիտի վնասէ երկիրին ժողովրդավարութեան. «Մեր կուսակցութիւնը կրօնամոլութեան վերագրելը կը նշանակէ ճերմակը սելին հետ խառնել», ըսաւ Երտողան:

Երոխորհրդարանի գլխաւոր քարտուղար Թերի Տէյլիս իր խոր մտահոգութիւնը արտայայտեց Թուրքիոյ «Արդարութիւն եւ Բարգաւաճում» իշխող կուսակցութեան գործունէութիւնը կասեցնելու վճռաբեկ ատենակի պահանջով:

Երոխորհրդարանի գլխաւոր քարտուղարը նշեց, թէ ժողովրդավարական երկիրներու մէջ քաղաքական հարցերը կը լուծեն ընտրութիւններու միջոցաւ, եւ ոչ՝ դատարաններու:

Իրանի կառավարութեան խօսնակ Ղուլիաւ Էլիսան յայտարարեց, թէ Թեհրան յետ այսու մտադրութիւն չունի բանակցութիւններ վարելու ՄԱԿ-ի Ապահովութեան Խորհուրդի մնայուն հիւճ անդամներուն հետ:

«Արմաւիան» լեկտուրի միջազգային գործակալութիւնը միակ հեղինակութիւնն է, որ իրանական թրջածրարը քննարկելու իրաւատրութեամբ է օժտուած», ըսաւ Էլիսան:

Իսկ Պրիւքելի մէջ խօսք առնելով, Երոմիութեան արտաքին քաղաքականութեան գլխաւոր քննազեպ հաւիթ Սոլաւա՝ Իրանը կարեւոր մէկ օղակը նկատեց «Նափոքը» կազմաւորին համար: Դիտել տալով հանդերձ միջուկային ծրագրին շուրջ գոյուրին ունեցող տարակարծու-

թիւները, Սոլաւա ընդգծեց Իրանի հետ կայուն յարաբերութիւններու անհրաժեշտութիւնը:

Իրանի նախագահ Մահմուտ Ահմետիսեճան յայտարարեց, թէ Իրան, Իրաք եւ Թուրքիա միացեալ պայքար պետք է մղեն Թուրքիստանի Աշխատատրական կուսակցութեան դէմ, որպէսզի կարելի ըլլայ այս կազմակերպութիւնը պարտութեան մատնել:

Ահմետիսեճան ընդգծեց, որ այդ գործակցութիւնը պետք է տեղի ունենայ այն պայմանով, որ երեք պետութիւնները յարգեն իրարու հողային անձեռնմխելիութիւնը ու ամէն շանք պետք է կտարուի, որպէսզի անմեղ քաղաքայիններ գոհ չերթան զինուորական գործողութիւններուն:

Ճափոնի պատճօնապէս ճանչցաւ Զոսովոյի անկախութեան «Ճափոն յոյսով է, որ Զոսովոյի անկախութիւնը կը նպաստէ Երոսոյայի մէջ մնայուն կայունութեան պահպանման աշխատանքներուն», ըսաւ Ճափոնի արտաքին գործոց նախարարութեան խօսնակ Վր:

Նշեց, թէ Զոսովոյի անկախութիւնը ճանչցող պետութիւններուն թիւը բարձրացաւ 25-ի: Սակայն, երկու միլիոն ալպանացիներով բնակուած Զոսովոյի 120 հազար սերպ փոքրամասնութիւնը կը մերժէ ճանչնալ Զոսովոյի անկախացումը:

Շիիններու սրբազան Քարալլա քաղաքին մէջ, վերջին 48 ժամերուն ահաբեկչութեան զոհ գացին 87 քաղաքացիներ: Վիրաւորուած են աւելի քան հարիւր ուրիշներ:

Կ'արժէ ընդգծել, որ արիւնակի այս յարձակումները պատահեցան այն պահէն էտք, երբ Պաղտատ այցելած Միացեալ Ահաւանքներու փոխ նախագահը շնորհաւորեց Իրաքի ամերիկեան հրամանատարութիւնը՝ երկիրին կայունութեան եւ ապահովութեան մարզերուն մէջ ձեռք բերած յաջողութիւններուն առիթով:

Չէյնի ըսաւ, որ Միացեալ Ահաւանքներ մտադրած է յաղթական ասարտի հասցընել Իրաքի մէջ իր առաքելութիւնը:

ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղար Պալ Քի Մուն ըսաւ, որ Կիպրոսի յոյն եւ թուրք համայնքներու ղեկավարներուն՝ Մարտ 21-ին, Լիկուսիոյ մէջ կայանալիք հանդիպումը նոր հնարաւորութիւններ կը բանայ Երոսոյայի այս երկար հակամարտութեան լուծման համար:

Դիւանագիտական աղբիւրներու համաձայն, Կիպրոսի նախագահ Տիմոթիոս Խրիստոֆիասն է ինքնաշոքար Կիպրոսի թրջական հակարայեանութեան ղեկավար Մեհմետ Ալի Թալաթի հանդիպումը պիտի

նպաստէ կիպրական խնդիրի կարգաւորման շուրջ բանակցութիւններու վերսկըսման:

Միւս կողմէ, Կիպրոսի խորհրդարանի հայ ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեան հրապարակեց հաղորդագրութիւն մը, որուն մէջ իր եւ հայ համայնքին աւանդով ցաւ յ